



## 82. ԳՅԵԺ ՄԱՐԹ ՈՒ ԿՐՆՐԿ

Կեր, չըկեր, մարթըմ կեր, ուր կընըկ: Էլան, թոնըր վանիցին, ուրից խանար ճաշ իփիցին, տըրին թորվան կուղ, էլան տուս, տառ շինիցին: Մարթըմ տեսան. մարթն էլ աման ծախող էր, որ կյեղը մեջ կան կը կան:

Մարթ, ուր կընըկ սիցին. - Հայ մարթ, չը իյաս մի տուն. մինք ճաշ իփիր ինք, տըրիր ինք մա թոնըր, եղը ճուռիկն էլ գի խան կըշտին, տառն էլ շինիր ինք, պանիս տըրիր ինք փակտուն, մինք տ'երթանք գանտ, անանփուրիկ պիրինք, նուր մի ճաշ ուտինք:

Կանցին, գանտ արին, անանփուրիկն էլ պիրին, ան անանփուրիկն էլ խիլծ էր:

Իկին տուն, տեսան ճաշ կերած, եղն էլ կերած, պուտուկ քանած հինը, տառ շինած, պանիս էլմէլ տըրած փակտուն, կանաց:

Ճանջըմ թառեր էր կընգան ճակատ, իրիկ էսաց. - Ինչ արիր, ինչ չարիր, ատ ճանջն արիր: Կըլուխ կի՛ք պըռնը, սպանիմ:

Թավանե՛մ էգար, ինչ էգար, ճանջ թըռավ, կընգան կըլուխ արավ էրկու շանկ: Կընըկ ընգանվ հանտը, մեռավ:

Էլանվ, զէ էպանց, էսաց. - Որ իմ կընըկ մեռավ, իս իմ տուն տը տանիմ:

Կանցին ճամբան, էշ զըռաց:

Էսաց. - Քիւ տիրու խե՛ր... Իմ կընըկ մեռավ, տուս փո՛ղ կը փըլիս:

Հանձնապոչ՝մ էգար, գէշ սպանից, պըղիճճըմ պեռնեն էխան,  
էթալ թիվ, կըընաց: Փըշու՝մ կըընաց, պըղիճճ տեպավ քար, ծեն  
էլավ, էսաց. - Քու տիրու խե՛րն անիծած, իմ կըընկ մեռիր, մերաթ  
շիվարիր, տու սա՞գ կը գարկիս:

Պըղիճճ կըըլիւրից, իրը, կըընաց:

Ան էլ կըընաց, խասավ կյիտու պերան, էսաց. - Նեղացիր իմ,  
աղու՝մ տը լիղկանամ:

Խանավքիր էխան, մըտավ կյիտ, լիղկացավ, մամուռ փա-  
թըթվավ մերաթը պիւլիւր, էսաց. - Իմ էշ խատիր, տու կանաց-  
կարմի՞ր կը կապիս:

Էգար, կըտրից, կըընաց հընգավ հեքիմքիր: Մըհա չուր  
հի՛փ:

